

1.Ներածություն

19-րդ դարի առաջին կեսը պատմական բեկումնային ժամանակաշրջան էր:Դա հին, ավատատիրական աշխարհից,նոր բուրժուական հասարակությանն անցնելու ժամանակաշրջան էր:Եվ այդ անցումը,ինչպես ամեն պատմական շեշտակի բեկում,տեղի էր ունենում համառ,դաժան պայքարում, հեղափոխությունների ու պատերազմների միջոցով,բարդ ձևերով,փոփոխակի հաջողություններով,մերթ մեկ՝ մերթ մյուս կողմի համար:

Իսկ Նապոլեոնյան Ֆրանսիան,որպես այդ ժամանակի առավել հզոր պետություն,ավելի ամբողջական ու ցայտունկերպով է ներառել այդ բեկումնային ժամանակաշրջանի բոլոր հակասությունները:

Հետաքրքրությունները 19-րդ դարի հեռավոր,բայց չափազանց բուռն իրադարձությունների նկատմամբ առաջ է եկել Նախ Նրանից,որ դրանք շոշափում էին ժողովրդական լայն մասսաների կենսական շահերը: Դրանցում վճռվում էր եվրոպական շատ երկրների, պետությունների ու ժողովուրդների շահերը:

Այդ իրադարձությունների կենտրոնում և դրանց կիզակետը՝ Ռուսաստանի վրա Նապոլեոնյան բանակի հարձակումն էր և Նրա կործանումը:

Պատմությունը անփոփոխ կերպով հաստատում է հետևյալ ճշմարտությունը՝ Ռուսաստանի դեմ18-19-րդ դ.դ ձեռնարկված բոկոր ագրեսիվ արշավանքները անխուսափելիորեն վերջացել են ագրեսորի կործանումով:

Նապոլեոնյան բանակի հարձակումը Ռուսաստանի վրա դարձել է պատմության հեռավոր մի էջ:Այդ ժամանակից ի վեր աշխարհում տեղի են ունեցել և ունենում խորը քաղաքական և սոցիալական վերափոխումներ:

Այս ժամանակահատվածում մարդկությանը բազմիցս ցնցել են առավել վիթխարի պատերազմները,որոնք բերել են հսկայական զոհեր և ավերածություններ:

Քաղաքացիական ու Հայրենական Մեծ պատերազմների դաժան մարտերում,ռուս ժողովուրդը անհամեմատ ավելի դաժան պայքարում,ջախջախեց ավելի հզորագույն ագրեսորների ,քան Նապոլեոնյան բանակն էր:

Սակայն 1812թ պատերազմում նվաճողներից իրենց հայրենիքը պաշտպանելու համար,ռուս ժողովրդի կատարած հերոսական

սխրագործությունը այժմ էլ առաջ է բերում ազգային հպարտության
ազնիվ զգացում:



2.Նապոլեոնյան Ֆրանսիայի հարձակումը Ռուսաստանի վրա և ուսու ժողովրդի Չայրենական Մեծ պատերազմը

Ռուս-ֆրանսիական դաշինքը, որը ձևավորվել էր 1807թ. Տիլզիտում, առաջին ճեղքվածքը տվեց 1808թ. Երֆուրտում երկու երկրների կայսրերի տեսակցության ժամանակ, և այդ ճեղքվածքը լուրջ կերպով մեծացավ 1808թ. Ավստրիայի դեմ Նապոլեոնի մղած պատերազմի ժամանակ:

Ըստ երևույթի, 1811թ., կամ, գուցե, 1810թ. վերջին, ծագեց Ռուսաստանի դեմ պատերազմ սկսելու միտքը: Չամենայնդեպս, 1811թ. Պետերբուրգում արդեն կարծիք էր ստեղծվել պատերազմի հավանականության, և, նույնիսկ, մոտալուստ լինելու մասին:

Ռուսաստանի վրա հարձակվելու նախօրյակին Նապոլեոնը կարողացավ իրեն ենթարկել Պրուսիան, Ավստրիան, Իտալիան, Յուլանդիան: Նապոլեոնին դիմադիր մնացին Ռուսաստանը և Անգլիան:

Երբ, 1811թ. արդեն հստակ լուրեր տարածվեցին Ռուսաստանի հետ պատերազմի հնարավորության մասին, դրանք համընդհանուր, զայրույթ առաջացրին:

Ինչի՞ համար էր այս պատերազմը, ու՞մ էր պետք այն: Նույնիսկ ինքը՝ Նապոլեոնը, պատերազմի նախապատրաստության շրջանում, հասկանում էր այդ պատերազմի ավելորդությունը, կամ, գուցե, նույնիսկ կործանարարությունը: Եվ այնուամենայնիվ 1811թ սկսած Նապոլեոնը սկսեց պատերազմի նախապատրաստվել Ռուսաստանի դեմ: Այսպիսով սկսվեց Ռուսաստանի Չայրենական Մեծ պատերազմը:

Նապոլեոնը մշակեց կարճատև հարձակողական պատերազմի ծրագիր՝ հուճս ունենալով մի քանի հաղթական ճակատամարտերով ծնկի բերել Ռուսաստանին:

1812թ. գարնանը Նապոլեոնը Դրեզդենում ասել է. «Ես պատերազմը կսկսեմ Նեմանի անցումով: Նրա սահմանը կլինի Մինսկն ու Սմոլենսկը: Այստեղ ես կանգ կառնեմ, կամրապնդեմ այդ 2 կետերը և կվերադառնամ Վիլնո, որտեղ գտնվելու է հրամանատարության ռազմակայանը...»^{*1}:

1. Ա. Զ. Մանֆրեդ, «Նապոլեոն Բոնապարտ», Երևան, 1975թ, էջ 676-677:



Պատերազմի նախօրյակին Նապոլեոնը իր բանակը հասցրեց 1մլն.200հազ.-ի,որը այդ ժամանակի աշխարհի ամենամեծ բանակն էր:

Եվ այսպես.1812թ.հունիսի 24-ի առավոտյան վրա կառուցված երեք նավակամուրջներով նապոլեոնյան բանակը մտավ ռուսական կայսրության տարածք: Նապոլեոնի «Մեծ բանակը»,գրեթե,անարգել անցավ Նեմանը ,և ոչ մի դիմադրության չհանդիպելով,շարժվեց դեպի ռուսական կայսրության խորքերը: Հունիսի 28-ին ֆրանսիացիները գրավեցին Կովբոյ քաղաքը:Նույն օրը ֆրանսիացիները մտան նաև Վիլնո Շուտով Վիլնո ժամանեց նաև ինքը՝Նապոլեոնը:Ֆրանսիական բանակը ղեկավարում էին մարշալներ Դավոլև,Նեյը,Մյուրատը,Ռուդինոն և այլոք: Նապոլեոնյան բանակը միավորված են երեք խմբի մեջ՝

1.Ձախ թե՛ բանակի գլխավոր խմբավորումը բաղկացած էր 3 հետևանքային կորպուսներից,2հեծյալ կորպուսներից և գվարդիայից(218հազ.մարդ և 527 հրանոթ): Նապոլեոնը անձամբ էր ղեկավարում այս զորախումբը:

2.Բանամի կենտրոնը գեներալ Բոգերինի(Նապոլեոնի հոգևորդին) հրամանատարությամբ բաղկացած էր 2 հետևակային կորպուսներից և հեծյալ կորպուսից(82հազ.մարդ և 208հրանոթ):

3.Բանակի աջ թևը՝Նապոլեոնի կրտսեր եղբայր՝Վեստֆալիայի թագավոր Ժերոմի հրամանատարությամբ բաղկացած էր 3 հետևակային և մեկ հեծյալ կորպուսներից:(78հազ.մարդ 159 հրանոթ):

Իսկ ինչպե՞ս էին իրադարձությունները ընթանում այս նույն ժամանակ Ռուսաստանում:

Ռուսաստանը նույնպես պատրաստվում էր պատերազմի:Սկսվեց բանակի վերակառուցումը,որը չավարտվեց զսկսված պատերազմի պատճառով էլ:Նախ չես,անց դժվար էր ընթացել բանակի համալրման գործը:1812թ հունիսի 24-ին,ուշ երեկոյան Վիլնոյում իր պատվին կազմակերպած պարահանդեսում Ալեքսանդր 1-ինը իմացավ,որ Նապոլեոնը անցել է Ռուսաստանի սահմանը:Հաջորդ օրը՝հունիսի 25-ին,ցարը իր մոտ կանչեց ոստիկանության մինիստր Բալաչովին,և հանձնելով Նապոլեոնին ուղղված նամակը,ուղարկում է Նապոլեոնի մոտ:Նույն գիշերը Բալաչովը մեկնում է և լուսաբացին հասնում է ֆրանսիական բանակի առաջավոր պոստերին: Բալաչովը,մինչև Նապոլեոնին հանդիպելը,եղավ նախ՝Մյուրատի,իսկ հետո՝Դավույի

մոտ:Եվ միայն հունիսի 30-ին Բալաչովը վերջապես հանդիպում ունեցավ Նապոլեոնի հետ:Այդ օրը՝ հունիսի 30-ին, Բալաչովը Նապոլեոնի հետ ունեցավ 2 երկու տեսակցություն:Մեկը կայսերական սախաճաշից առաջ,մյուսը՝ ճաշին,որին ներկա էին մարշալներ Բերտյեն և Բեսայերը և Վիլնայի հերցոգ Կոլենկուրը:Տեսակցությունների ժամանակ Բալաչովը Նապոլեոնին տեղեկացրեց,որ Ալեքսանդրը չի ցանկանում պատերազմել,և եթե Նապոլեոնը մտադիր է բանակցություններ սկսել,ապա դրանք կարող է անմիջապես սկսել: Բայց բանակցություններ սկսել միայն մեկ պայմանով , որ ֆրանսիական զորքերը դուրս գան երկրի սահմանների: Բալաչովի այս տեղեկությանը Նապոլեոնը բարկացած պատասխանում է.«Ինձ համար մեկ պատերազմ ավելի՝նշանկում է նոր հաղթանակ ևս..»²: Հաջորդ օրը Բալաչովը վերադարձավ և Ալեքսանդր 1-ին զեկուցեց խոսկցության մասին: Այսպիսով, պատերազմը վճռված էր վերջնականապես և անդառնալի:

1812թհուլիսի Ալեքսանդր 1-ինը կոչով դիմեց ռուս ժողովրդին՝կոչ անելով նրանց համախմբվել և միասին պաշտպանել հայրենիքը թշնամու հարձակումներից:

2.Տե՛ս Յե.Տարլե,«Նապոլեոնի 1812թ արշավանքը Ռուսաս,
Երևան,1939թ.Էջ 6

Ֆրանսիայի հետ պատերազմից առաջ Ռուսաստանն ուներ համեմատաբար մեծ բանակ՝ մոտ 200 հազարանոց դաշտային զորք, 100 հազ. կայազորային և 110 հազարանոց անկանոն հեծելազոր: Ընդամենը մոտ 500 հազ. մարդ: Բայց Նապոլեոնի դեմ պայքարի համար կարելի էր դուրս բերել 200 հզ-ից ոչ ավելի (այն էլ մեծ ռիսկով), քանի որ այդ ժամանակ արդեն աճել էր հարավում Թուրքիայի հետ պատերազմի ծագման սպառնալիքը:

Ամբողջ բանակը բաժանված էր 2 մասի: Առաջին մասը կազմված էր 5 հետևակային զորայուններից: Առաջին զորայան մեջ Պ.

Ի. Բագրատիոնի ղեկավարությամբ մտան 3

գունդ՝ եգերական, գրենադերական և հրացանակիրներ: Երկրորդի մեջ՝ Ս. Ա. Միլորադովիչի հրամանատարությամբ՝ հրացանակիրների 2 և գրենադերական 1 գունդ: Երրորդի մեջ՝ Դ. Ս. Դոխտորովի հրամանատարությամբ՝ հրացանակիրների 2, եգերական մեկ գունդ, չորրորդի մեջ՝ Ս. Յա. Ռեպինսկու հրամանատարությամբ հրացանակիրների 3 գունդ. Լ Ֆ. Լաստիցի 5-երրորդ զորայան մեջ ընդգրկված հրացանակիրների 3 գունդ :

Բանակի երկրորդ մասը Ա. Ա. Էսսենի հրամանատարությամբ՝ նույնպես բաղկացած էր 5 զորայուններից:

Ռուսական բանակը ղեկավարում էին նշանավոր զորահրամանատարներ Կոնտուզովը, Բարկլայ-Դե Ջոլին, Երմոլովը և ուրիշներ:

Ըստ գեներալ կոմս Տոլիի վկայության պատերազմի սկզբում սկզբնական պլանն էր՝ հարձակողական գործունեությունների անցնել: Սակայն Վիլլայի ափին կենտրոնացված Նապոլեոնի ուժերի անչափ գերազանցությունը, և նաև մի քանի քաղաքական հանգամանքներ հարկադրեցին պլանը փոխել: «Որոշվեց պաշտպանողական պատերազմ մղել»: որովհետև այդ ժամանակ Ռուսաստանում գոյություն ունեցող 500-հազարանոց բանակից Նապոլեոնի դեմ կարելի էր հանել 200 հազարից ոչ ավելին:

Որոշված էր նահանջել: «Ճիշտ է այս որոշմամբ մենք զոհաբերեցինք մի քանի պրովինցիաներ, բայց երկու անխուսափելի չարիքներից պետք է ընտրել ամենաթեթևը՝ ժամանակավորապես մի մասը կորցնել, քան թե ամբողջը»³, -ասել է կոմս Տոլին նահանջի որոշման կապակցությամբ:

3. Տես Յե. Տարլե, Նապոլեոնի 1812 թ. արշավանքը Ռուսաստան, Երևան 1939 թ., էջ 74

Ռուսական տարածքների այս առաջին կորուստը շփոթության մեջ գցեց Ալեքսանդր առաջինին և նրա շրջապատին :

«Ինչպե՞ս, պատերազմն սկսելուց 5 օր անց կորցնել Վիյան և փախուստի մատնվել, այնքան քաղաքներ և հողեր ավար թողնե՞լ...»⁴, -այսպես է գրել պետական քարտուղար Շիչկովը պատերազմի առաջին օրերին: Այսպիսով ռուսական բանակը նահանջում էր երկրի խորքը: Նահանջում էր, որովհետև ստեղծված դրության մեջ այլ կերպ վարվել հնարավոր չէր: Ռուսական զորքերի նահանջը բնակչության մոտ առաջ բերեց դժգոհություն: Բնակչությունը դժգոհում էր ռուսական զորքերի նահանջից, բայց այդ նահանջն էլ ճիշտ էր, քանի որ դա պայմաններ էր ուժերը պահպանելու համար : Ռուսական բանակի նահանջը, ինչպես նշել է Մարքսը, կատարվել է «հիանալի ակյդարվեստը դրսևորվեց ամենից առաջ նահանջի հմուտ կազմակերպեշումով, զորքերի բարձր շարժունակությամբ և մանևրայնությանբ, վերջապահ զորքերի հմառ մարտերի հետ զուգակցելու ունակությամբ:

Նահանջի ընթացքում ռուսական բանակը 38 օրում անցավ մոտավորապես 600 կմ ճանապարհ և պահպանեց իր հիմնական ուժերը: Սպանվածների թիվը չանցավ 10 հազ մարդուց: Վիրավորվածները և հետ մնացածների թիվը չանցավ 25 հազ-ը: Սմոլենսկում միանալու ժամանակ ռուսական զորքերը կազմում էին 25 հազ:

1. Տեռ Յե. Տարլե, Նապոլեոնի 1812թ. Արշավանքը Ռուսաստան, Երևան, 1939թ, էջ 73:

2. Պ. Ա. Ժիլին, Նապոլեոնի բանակի կործանումը Ռուսաստանում, Երևան, 1979, էջ 148

3.Սմոլենսկի և Բորոդինոյի ճակատամարտերը

Օգոստոսի 16(4)-ին Նապոլեոնը մոտեցավ Սմոլենսկին Լյուբն գյուղում տեղավորվեց կալվածատիջոջ տանը:Սմոլենսկին մոտենալիս ֆրանսիական բանակում 200հազ.մարդուց ավել չէր հաշվում,սրանք ցրվել են ռազմական գործողությունների թատերաբեմում:

Սմոլենսկուն Նապոլեոնի պլանն այնէր՝Դավույի,Նեյի,Պոնյատովսկու կորպուսները գրոհով վերցնեն Սմոլենսկը,իսկ այդ նույն ժամանակ Ժուկոյի կորպուսը Սմոլենսկը շրջանցելով դուրս պիտի գար Մոսկվա տանող ճանապարհին ,և արգելք հանդիսանար ռուսական բանակի նահանջին: Նապոլեոնը հույս ուներ,որ վերջապես իրեն կհաջողվի հակառակորդին գլխավոր ճակատամարտեր պարտադրել:Ֆրանսիական զորքերը սլանում էին Սմոլենսկ: Ճանապարհով շարժվում էին Մյուրատի հեծելազորը,գվարդիան,Դավույի և Նեյի հետևակային կորպուսները:

Օգոստոսի 16(4)-ին առավոտյան ժամը 6-ին Նապոլեոնը սկսեց Սմոլենսկի ռմբակոծությունը,և շուտով տեղի ունեցավ առաջին գրոհը:Քաղաքն առաջին գծում պաշտպանում էր Ռաևսյկու դիվիզիան:Ռաևսյկու՝ավելի քան 15 հազ մարդուց բաղկացած զորքին վիճակված էր մեկ օրվա ընթացքում դիմանալ Նապոլեոնյան բանակի հիմնական ուժերի ճնշմանը:

Գիշերը Բարկլայի հրամանով Ռաևսյկու կորպուսի,որը վիթխարի կորուստներ է ունեցել ,փոխարինեց Դոխտուրովի կորպուսը:Օգոստոսի 17(5)-ին և 18(6)-ին գիշերը ռմբակոծությունն ու հրդեհները ուժեղացան:

Հանկարծ գիշերվա կեսին ռուսական թնդանոթները լռեցին,իսկ հետո ֆրանսիացիք լռեցին չտեսնված ուժեղ պայթյուններ: Բարկլայ-Դե Տոլին հրամայել էր վառողի պահեստները պայթեցնել ու դուրս գալ քաղաքից:Ռուսական զորքերը Սմոլենսկի մոտ կռվում էին մեծ ոգևորվածությամբ:Եվ այն ժամանակ,երբ Բարկլայից հրաման եկավ քաղաքը թողնելու մասին,սրանք իրենց ամենուն պարտված չէին համարում:Այդ գիշեր Նապոլեոնը նայելով բոցավառվող Սմոլենսկին ասել է.«Վեզուվի ժայթքումն է»⁶ :Այս խոսքերը ապշեցրել են նույնիսկ Կոլենկուրին,որը ամեն ինչում պաշտպանում ու համաձայնվում էր Նապոլեոնի հետ:

6.Պ.Ա.Ժիլին,Նապոլեոնյան բանակի կործանումը
Ռուսաստանում,Երևան 1979թ,Էջ 150

Սմոլենսկը բոցավառվում էր: Հրդեհի բոցերը լուսավորում էին քաղաքը թողած ռուսական զորքերի ճանապարհը: Չորքերի հետ քաղաքը թողեցին նաև նրա բնակիչները: Կիսաքանդ քաղաքը դատարկ էր: «Քաղաքում մնացել էր, - գրում էր Կոլենկուրը, - միայն մի քանի տղամարդ և հասարակ ժողովրդից , մի քահանա և մի արհեստավոր...»⁷:

Երկու օր տևած մարտերի ընթացքում ֆրանսիական բանակը կորցրեց 120 հազ մարդ՝ սպանված և վիրավոր: Ռուսական բանակի կորուստները երկու անգամ պակաս էին: Առավոտյան ֆրանսիական բանակը մտավ կիսաքանդ Սմոլենսկ: Սոված զինվորները վազվզում էին դատարկ տներով: Քաղաքում պարենամթերք ու անասնակեր չգտնվեց:

Սմոլենսկում Նապոլեոնը վատ տրամադրության մեջ էր: Նա հասկանում էր, որ ռուսական բանակը թեև Նահանջում էր, բայց նրա ուժերը պահպանվում էին:

Սմոլենսկի ճակատամարտից հետո անչափ ընկավ Բարկլայ-Ղե-Տոլիի հեղինակությունը:

Դրանից էլ ելնելով Ալեքսանդր 1-ինը հարկադրված է համակերպվել անվիճելի հեղինակություն ունեցող Միխայիլ Կուտուզովին նշանակել գլխավոր հրամանատար Թեև նրան չէր սիրում:

1812թ Միխայիլ Իլլիարինովիչ Կուտուզովը թևակոխեց իր կյանքի 68-րդ տարին և նրան մնացել էր ապրել ուղիղ իննը ամիս: Հենց այդ ամիսներին էլ նրան վիճակվեց իր անունը ընդմիշտ կապել ռուսական ու համաշխարհային պատմության մեծագույն դեմքերի հետ և ընդմիշտ մնալ մարդկային հիշողության մեջ՝ որպես ռուս ժողովրդի տաղանդավոր զորավար՝ Ռուսաստանի գոյության ամռնասոսկալի թոպեին: Կուտուզովը գիտեր 6 լեզու, ուներ մեծագույն հեղինակություն և հայտնի էր որպես Սուվորովի սիրելի աշակերտ:

Եվ այսպես , անչափ ծանր պայմաններում Մ.Ի. Կուտուզովը նշանակվեց ռուսական բանակի գերագույն հրամանատար:

7.Պ.Ա.Ժիլին, Նապոլեոնյան բանակի կործանումը
Ռուսաստանում, Երևան 1979թ, էջ 156

Շուտով Նապոլեոնին հայտնի դարձավ ռուսական բանակի գերագույն հրամանատարության փոփոխությունները: Կուստոզովի նշանակումը նա կապում էր ռուսական զորքերի ստրատեգիայի անպայման փոփոխության հետ:

Անցնելով գլխավոր հրամանատարի պաշտոնին Կուստուզովը ոչ մի պլան չստացավ: Այդ առումով նրան տրվեց մեծ ինքնուրույնություն: Միաժամանակ նրա վրա դրվեց վիթխարի պատասխանատվություն: Կուստուզովի առջև մեկ խնդիր կար. կասեցնել ֆրանսիական բանակի հարձակումը և նրանց քշել Ռուսաստանից: Բոլորը սպասում էին, որ գլխավոր հրամանատարը կդադարեցնի նահանջը և կվերսկսվի հարձակումը: Սակայն 1812թ օգոստոսի 17-ին Կուստուզովը գալով զորական որոշեց շարունակել նահանջը: Կուստուզովը ցարին ուղղված հենց առաջին զեկույցում բացատրելով բանակի նահանջի պատճառները, գրում է. «Ես գտա , որ շատ զնդեր հաճախակի ճակատամարտից հյուժվել են...»⁸, ուստի խնդրեց ցարին բանակն ուժեղացնելու նպատակով կազմել նոր զորագնդեր: Բանակն հետ քաշելով երկրի խորքերը Կուստուզովը դրանով իսկ ,ասես թե արդեն անհրաժեշտ պայմաններ են ստեղծում հետագա ակտիվ հարձակողական գործողությունների համար: Այս տեսակետից Բորոդինոյի ճակատամարտը վիթխարի դեր խաղաց:

Պատրաստվելով Բորոդինոյի ճակատամարտին ռուսական հրամանատարությունը ակտիվ գործողություններ էր ծավալում: Կուստուզովը որոշեց Մոսկվայի: 120կմ հեռու գտնվող Բորոդինո գյուղի մոտ տալ գլխավոր ճակատամարտը: 1812թ օգոստոսի 24-ին առավոտյան սկսվեց ճակատամարտը, որը տևեց 12 ժամ:

1812թ օգոստոսի 24-ին արշավույսը մարդկության պատմության ամենաարյունալի օրերից մեկն էր: Բորոդինոյի ճակատամարտում Նապոլեոնը կենտրոնացրել էր 135 հազ զինվոր, 587 հրանոթ:

Ռքևական բանակը այստեղ ուներ 150 հազ զինվոր և 640 հրանոթ: Այս ճակատամարտում երկու կողմից էլ շատ զոհեր եղան: Ֆրանսիացիները կորցրին 35 հազ. ռուսները 45 հազ. մարդ: Այս ճակատամարտից հետո ռուսական զորքերը նահանջեցին՝ Նաոկեոնի բանակին հասցնելով մահացու վերք: Չնայած Կուստուզովը նահանջեց, բայց Նապոլեոն էլ Բորոդինոյում չհաղթեց: Նապոլեոնի բանակը կորցրեց ինքնավստահությունը: Ժամանակակից պատմաբանները Կորոդինոյեց նահանջելը համարեցին Ռուսաստանի բարոյական ու քաղաքական հաղթանակ: Հետաքրքիր է նաև Բորոդինոյի ճակատամարտի մասին Նապոլեոնի գնահատականը: Նա գրել է.

«Մոսկվայի մոտ ճակատամարտը իմ ամենամեծ ճակատամարտն էր: Դա գիզանտների մենամարտ էր: Իմ բոլոր մարտերից ամենասարսափելին այն մարտն

էր, որ ես տվեցի Բորոդինոյի դաշտում: Այդ մարտում ֆրանսիացիները ցույց տվեցին, որ արժանի են հաղթանակ տանելու, իսկ ռուսները վաստակեցին անպարտելի մնալու իրավունքը»⁹:

Բորոդինոյի ճակատամարտը գնահատելիս պետք է հաշվի առնել 3 գլխավոր` Նապոլեոնյան բանակին չհաջողվեց կտրել ռուսների դիմադրությունը, ջախջախել նրանց և իրենց համար ազատ ճանապարհ բացել դեպի Մոսկվա:

Երկրորդ` Ռուսական բանակը շարքից հանեց հակառակորդի զորքերի գրեթե կեսը:

Երրորդ` Բորոդինոյի դաշտում ֆրանսիական բանակը անհատուցելի բարոյական վնաս կրեց, այն դեպքում, երբ աճեց հակառակորդի դեմ հաղթանակի հասնելու ռուսական զորքերի հավատը: Մեծ է Բորոդինոյի ճակատամարտի նշանակությունը 1812թ Ռուսաստանի Հայրենական պատերազմում:



Բեկում պատերազմի մեջ

1812թ օգոստոսի 27-ին լուսաբացին ռուսական բանակի գլխավոր ուժերը, թողնելով Բորոդինո դաշտը սկսվեցին շարժվել Մոժայսկ տանող ճանապարհով: Օրվա վերջին բանակը կանգ առավ գիշերելու ժուկով գյուղի մոտ: Ռուսաական բանակի նահանջի կազմակերպումը, որի ժամանակ առանձնացվում էին ուժեղ վերջապահ զորամասերը, որոնք ամուր կերպով պաշտպանում էին զորքերի հիմնական խմբավորումները, նպաստում էին բանակի պլանաչափ նահանջին և նրա հիմնական ուժերը պահպանելուն:

Դեպի Մոսկվա շարժման ճանապարհին ռուսական բանակը գրեթե ամեն օր Մոսկվայի մոտ գլխավոր ճակատամարտը տալու պատրաստություն էր տեսնում և ամեն անգամ հետաձգում էին: Ստեղծվել էր բարդ իրադրություն, և այսպիսի դժվար պայմաններում Կուտուզովի առաջ դրված էր մի բարդ ու շատ կարևոր հարց: Ինչպե՞ս վարվել Մոսկվայի հետ, ճակատամարտ՞ տալ նրա պատերի մոտ, և այն պաշտպանել մինչև վերջին զինվորը, թե՞ այն թողնել առանց կռվի և պահել բանակը:

Այնքան հեշտ ու այնքան հասարակական չէր Մոսկվայի մոտ ճայշկատամարտ տալու որոշում ընդունելը: Այս ծանր դրությունից ելք կա՞ր արդյոք: Այս բարդ ու խճճված իրադրության մեջ սեպտեմբերի 1-ին Ֆիլիով հավաքվեց ռուսական բանակի խորհուրդը: Մինչև երեկոյան ժամը 5-ը այն տնակը ուր կանգ էր առել Կուտուզովը, եկան գեներալներ Մ.Բ. Բարկլայ դե-Տոլին, Դ.Ս. Դոխտուրովը, Ա.Պ. Երմոլովը և այլք: Զննարկման էր դրված մեկ հարց. մարտնչե՞լ, թե՞ Մոսկվան թողնել առանց կռվի:

Գեներալների մի մասը արտահայտվեցին Մոսկվան առանց կռվի թողնելու օգտին, մյուսները պնդում էին, որ պետք է ճակատամարտ տալ: Ապա ոտքի կանգնեց Կուտուզովը և արտասանեց իր նշանավոր ճառը. «Մոսկվանի կորուստով դեռ չի կորել Ռուսաստանը: Առաջին պարտականությունն եմ դնում պահպանել բանակը և մոտենալ այն զորքերին, որոնք գալիս են մեզ համարելու: Բուն Մոսկվայի զիջումով մենք նախապատրաստում ենք թշնամու անխուսափելի կործանումը, քանի որ դեռ գոյություն կունենա բանակը և կգտնվի թշնամուն դիմադրելու ունակ վիճակում:

Իսկ երբ կորցնենք բանակը կկորցնենք պատերազմն հաջողությամբ ավարտելու հույսը....

Չրամայում եմ նահանջել...»¹⁰:

Մոսկվան առանց կռվի թողնելու Կոլտուզովի որոշումը զորավարի կամքի ու մեծ ուժի վկահոլությունն էր: Կոլտուզովը չասաց, թե ու՞ր պետք է նահանջի բանակը: Նա այն պահեց խիստ գաղտնի: Ընդհանրապես Կոլտուզովը իր մտքերը չէր կիսում անգամ իր մերձավորների հետևելով, ըստ երեկոյթին, այն կանոնին, թե բարձն անգամ ,որի վրա քնում է զորավարը, չպետք է իմանա նրա մտքերը:

Չաջորդ օրը՝ սեպտեմբերի 2-ին, Նապոլեոնը մոտեցավ Մոսկվային, և Ռոբբե բարձունքում, (որտեղ այժմ կառուցված է Մոսկվայի Պետական Չամալսարանը), 2 ժամից ավել սպասեց, որ իրեն հանձնեն Մոսկվայի բանակիները: Շուտով Նապոլեոնին տեղեկացրեցին, որ բանակիներ հանձնող չկա, քանի որ բանակի հետ Մոսկվան թողել են նաեւ բնակիչները: Այնուամենայնիվ Նապոլեոնը գտնվում էր իր նվիրական նպատակին մոտ: Գրավում էր Մոսկվան: Սակայն Նապոլեոնը հասնելով իր նպատակին, այնուամենայնիվ մռայլ էր, ինչպես երբեք: Մոսկվան չէր ուրախացնում նրան: Բանն այն է, որ Նապոլեոնը գիտակցում էր, որ չի ոչնչացրել Ռուսաստանի զինված ուժերը: Մոսկվան նվաճված չէր, այլ՝ թողնված էր առանց կռվի: Երեկոյան ֆրանսիացիները այրեցին «գրավված» Մոսկվան: Մոսկվան այրվեց մի ամբողջ շաբաթ, մինչև սեպտեմբերի 9-ը: Չրդեհների հե՛Կոլտուզովը ոսկսվեց նաև Մոսկվայի թալանը: Ֆրանսիական զինվորները: Ներխուժում էին դատարկ տները, խանութները:

Նապոլեոնը Մոսկվա մտավ սեպտեմբերի 2-ին և այն թողեց 34 իր հետո՝ 1812թ. հոկտեմբերի 6-ին: Չեռա ակով Մոսկվայից՝ ֆրանսիացիները պայթեցրին Կրեմլը: Գիտակցելով իրեն սպասվող ծանր վիճակը՝ Նապոլեոնը 3 անգամ Ալեքսանդր Առաջինին առաջարկեց սկսեց բանակցություններ, սակայն Ալեքսանդր Առաջինիը մերժեց:

10. Պ. Ա. Ժիլին, Նապոլեոնյան բանակի կործանումը Ռուսաստանում, Երևան 979թ., էջ 23

5.Ֆրանսիական բանակի կործանումը

Կուտուզովը որոշեց Մոսկվայից հեռացող Նապոլեոնին ապակողմնորոշել: Այդ նպատակով Մոսկվայից 80կմ հեռու գտնվող Տարուտինոյի մոտից անցավ Կալուզա տանող ճանապարհը և ժամանակ շահելով համախմբեց իր ուժերը նոր ճակատամարտի համար: Կուտուզովը փակելց Նապոլեոնի առջև Ուկրաինայի ճանապարհը, որտեղ Նապոլեոնը նպատակ ուներ իր բանակը ապահովվել պարենով:

Նապոլեոնյան բանակը գնալով նվազում էր և հյուժվել:

1812թ. Հոկտեմբերի 24-25-ը նապոլեոնյան բանակի, պատերազմի ելքի և ֆրանսիական կայսրության ճակատագրի համար եղան ճակատգրական օրեր: Ռուսական բանակը պաշտպանությունից անցավ հարձակման ֆրանսիական բանակը սկսեց նահանջել Սմոլենսկից մինչև Բերեզինա:

Նոյեմբերի 3-6-ին ֆրանսիական բանակը կրեց նոր պարտություններ: Մեկամսյա տևած մարտերին ֆրանսիական բանակը կորցրեց 90հազ մարդ: Ֆրանսիական բանակից մարտունակ մնաց 40հազ.: Նոյեմբերին ֆրանսիական բանակը արդեն Բերեզինայի ափին էր: Բերեզինայում ֆրանսիական բանակի կորուստները չափազանց մեծ էին: Նապոլեոնի «Մեծ բանակի» նահանջը սկսեց փախուստի վերածվել:

Բերեզինա~, ճակատագրական անուն, ճակատագրական վայր ֆրանսիական բանակի Բոջոզինայի ափին ֆրանսիական բանակի դրությունը բավականին կատաստրոֆիկ էր: Այդ օրերին անտանելի սովը ծայր աստիճանի էր հասել Սովին ավելացավ նաեւ սոսկալի աղետը՝ ռուսայան ձմեռ, սառնամանիքը: Սառնամանիքը տառացիորեն բնաջնջում էր ֆրանսիական բանակի մնացորդները: Երկարատեւ քաղցից հյուժված և խորը ձյունի միջով քայլելուց տանջված զինվորները հազարներով կոտորվում էին: Նապոլեոնին տանում էին սահմակով: Նրա հետ էին Կոլենկուրը և մի սպասավոր:

Կոլենկուրը իր հիշողություններում պատմել է, թե ինչպես ամբողջ ճանապարհին կայսրը շատ հանգիստ էր: Նապոլեոնի համար ռուսական արշավանքը լոկ տանուլ տված մի խաղ էր :

Այսպիսով 1812թ Նապոլեոնի զորքը հսկայական զոհեր տալով անցավ Բերեզինա գետը: Նապոլեոնի հսկայական բանակից մնաց ընդամենը 30հազար զինվոր :

1812թ դեկտեմբերի 6-ի Նապոլեոնը իր զորքի մնացորդները հանձնելով Սյուրատին մեկնեց Փարիզ:

1812թ դեկտեմբերի 21-ին Կուտուզովը հրամանով շնորհավորեց ռուսական զորքին՝ ֆրանսիական բանակը Ռուսաստանից արտաքսելու առթիվ:

Վերջ



Օգտագործված գրականություն

1. Ա.Զ.Մանֆրեդ, «Նապոլեոն Բոնապարտ», Երևան 1975թ
2. Պ.Ա.Ժիլին, «Նապոլեոնյան բանակի կործանումը Ռուսաստանում», Երևան 1975թ
3. Յե.Տարլե, «Նապոլեոն Բոնապարտ», Երևան 1946թ



Բովանդակություն

- **Ներածություն**
- **Նապոլեոնյան Ֆրանսիայի հարձակումը Ռուսաստանի վրա և ռուս ժողովրդի հայրենական պատերազմը**
- **Սմոլենսկի և Բորոդինոյի ճակատամարտերը**
- **Բեկում պատերազմի մեջ**
- **Ֆրանսիական բանակի կործանումը**



Հետազոտական Թեզ

ԹԵՄԱ

Նապոլեոն առաջինի բանակի
կործանումը Ռուսաստանում կամ
Ռուսաստանի՝ 1812թ Հայրենական
Մեծ Պատերազմը

Հետազոտող՝ Հովհ. Հովհաննիսյանի
անվան համ.52հիմն.դպրոցի
պատմության ուսուցչուհի Օվսաննա
Հակոբյան

Երևան

2021թ





